

Պատրիարքարանին մէջ, Տէր Յովհաննէս Վարդապետը եւ Միջագետքի Արքեպիսկոպոսը, համբուրելու համար ոտիցդ ներբանը, պատուելու՝ կենդանի մասունքները զլիաւոր առաքելոց, եւ յայտնելու մեր այս տարակոյսը: Այս զիտումով կ'ազաչեմ երանութեանդ, չլքես մեր որդին եւ քու նուազութեանդ, այլ կատարես մեր խնդրանքները, այսինքն՝ գրես անոնց (լեհահայոց) Եպիսկոպոսին, որ մեր եկեղեցին պահէ մեր հին աւանդութեան եւ ծէսին մէջ, ինչպէս մինչեւ ցայժմ մնաց. եւ այս՝ շատ զիւրին է երանութեանդ, եւ ոչ մէկ վնաս կը բերէ եկեղեցւոյ: Ահա թէ ինչո՞ւ համարձակեցայ զիմելու գթութեանդ եւ մեր վերողբեալ աղերսագիրը յղելու: Սակայն Վեհութիւնդ թող ընէ ինչ կերպով որ կ'ուզէ, ինչպէս կը վայելէ բարձրագոյն զիրքիդ եւ գերագոյն մեծանձնութեանդ: Նաեւ այս՝ ծածուկ չմնայ Վսեմութենէդ, Սրբազան Հայր, թէ յիշած ես մեր խոնարհութիւնը եւ յղած ես մեր անարժանութեան յոյժ գեղեցիկ եւ վայելուչ սկիհ մը, որ մեզի հասաւ, եւ մենք զայն ընդունելով շատ ուրախացանք առաւել քան զկար մեր. թող Սրբութենէդ անկորնչելի յիշատակ մ'ըլլայ այս՝ մեր Աթոռին մէջ. մենք մեծագոյն շնորհք մը կը նկատենք զայս Վսեմութենէդ տրուած: Այս պատճառաւ մեծ խանդաղատանքով մեր աղօթքը կ'առաքենք ի յոյս ամենեցուն, որպէսզի Աստուած պահէ Քեզ, Գլուխդ Եկեղեցւոյ, երկար ժամանակ, ըստ իր կամքին, եւ ի